ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/15

15 նոյեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Բագրատ Զաքարյանը, Սոնա Ադամյանը, Շահեն Մինասյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը:

Նիստը արձանագրում էր Աննա Նավասարդյանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2024 թվականի նոյեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N137-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին.
4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի վարձավճարի տույժը զիջելու մասին.
5)Գույքի նվիրաբերությանը համաձայնություն տալու մասին.
6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնելու մասին.
7)Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Տաշտուն գյուղում գտնվող նախկին դպրոցի շենքը անհատույց օգտագործման իրավունքով ստանալու նպատակով նախնական համաձայնություն տալու մասին.
8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում՝ Տերտերասարի ոսկու հանքավայրում, օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման համար «ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նախնական համաձայնություն տալու մասին.
9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N87-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
10)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 07 հուլիսի 2017 թվականի N62-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող ամբուլատորիայի շենքը նվիրաբերություն ստանալու մասին.
11)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 99-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N137-Ն որոշմամբ հաստատված N1, N2, N3, N4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1, N2, N3, N4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 100-Ն/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հատկացումներ՝ համաձայն N1, N2, N3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է /Որոշում N 101-Ն/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին» N11-Ա որոշմամբ հաստատված հավելվածում (համայնքապետարանի հիմնական միջոցներում) կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է /Որոշում N 102-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏՈՒՅԺԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Զիջել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի վարձավճարի տույժը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 103-Ա/

ԼՍԵՑ - ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Համաձայնություն տալ Միավորված ազգերի կազմակերպության մասը կազմող Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքին գույքի նվիրաբերությանը՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված գույքը ենթակա է օգտագործման 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից բռնի տեղահանված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում վերաբնակեցված արցախցիների կողմից օգտագործման և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի կարիքները սպասարկելու համար:

3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 104-Ա/

Ավագանու անդամ Արմեն Հայրապետյանը դուրս է եկել նիստերի դահլիճից և չի մասնակցել NN 104-Ա, 105-Ա, 106-Ա, 107-Ա, 108-Ա, 109-Ա, 110-Ա նախագծերի քվեարկությանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել ՀՀ ՆԳՆ Մեղրու Փրկարար ծառայությանը,«Մեղրի համայնքի մանկապապարտեզ» ՀՈԱԿ-ին, «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ–ին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 105-Ա/

Ավագանու անդամ Արտուշ Մաթևոսյանը դուրս է եկել նիստերի դահլիճից և չի մասնակցել NN 105-Ա, 106-Ա, 107-Ա, 108-Ա, 109-Ա, 110-Ա նախագծերի քվեարկությանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇՏՈՒՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Տաշտուն գյուղում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող նախկին դպրոցի շենքը անհատույց օգտագործման իրավունքով ստանալու առաջարկությանը:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 106-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ՝ ՏԵՐՏԵՐԱՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ, ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՍԻԼՎԻ ԷՅ ՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - 1.Տալ նախնական համաձայնություն «Սիլվի Էյ Ջի» ՍՊ ընկերությանը «Մեղրի համայնքում՝ Տերտերասարի ոսկու հանքավայրում, օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման համար» ծրագրի նախնական տարբերակին:

2.Համայնքի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 107-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու, դրանց անհատական կազմը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 19-ի N75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N87-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 3-րդ հավելվածի 2-րդ կետում «Անժելա Վանեսյան» բառերը փոխարինել «Անահիտ Անդրեասյան» բառերով:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 108-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 07 ՀՈՒԼԻՍԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ N 62-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՇԵՆՔԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ – 1.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 7-ի N 62-Ա որոշումը:
2.Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին իրեն ամրացված Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Շվանիձոր գյուղում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող ամբուլատորիայի շենքը նվիրաբերությամբ Սյունիքի մարզի Մեղրի համայնքին տրամադրելու՝ նախադպրոցական կրթություն կազմակերպելու նպատակով:
3.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 109-Ա/

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ/

ՈՐՈՇԵՑ - Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 24-ը՝ ժամը 17:00-ն:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /Որոշում N 110-Ա/

Ավագանու անդամներ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐՈՒՍՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Նավասարդյանը